«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ

Սույն թվականի նոյեմբերի 26-27-ը Բրյուսելի Էկումենիկ կենտրոնում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) «Խաղաղություն, Անվտանգություն և Հաշտություն» աշխատանքային խմբի հանդիպումը:

Հայ Առաքելական Եկեղեցին, որպես ԵԵԿ անդամ, ներկայացուցիչներ ունի ԵԵԿ տարբեր կառույցներում: Հայ Առաքելական Եկեղեցին ԵԵԿ Կենտրոնական Կոմիտեում և «Եկեղեցիները երկխոսության մեջ» հանձնախմբում ներկայացնում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Գերաշնորհ Տ. Եզնիկ եպիսկոպոս Պետրոսյանը, «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբում՝ նույն բաժնի աշխատակից Հոգեշնորհ Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը, իսկ «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի «Խաղաղություն, Անվտանգություն և Հաշտություն» աշխատանքային խմբում՝ երեցկին Փոլա Դանեջյանը:

Հանդիպման նպատակն էր՝ ծանոթանալ և քննարկել ընթացիկ հարցերը և աշխատանքային խմբի համար հստակեցնել նպատակներ և առաջադրանքներ: Ընդհանուր թեման խաղաղություն և հաշտություն հասկացությունների քրիստոնեական ընկալման զարգացումն էր: Առաջին նախաձեռնությունը Եվրոմիության Հանձնախմբի կողմից հաստատված Անվտանգության Ռազմավարության վերանայումն է: Աստվածաբանական և գործնական բացատրություն պետք է պատրաստվի և հանձնարարականներ պետք է հղվեն «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբին՝ անդամ Եկեղեցիներին առաքելու համար: Ընդհանուր նպատակ ունենալով ուղիներ գտնել Եկեղեցիներից ներս հաշտությունը հիմնական հարց դարձնելու՝ որոշում կայացվեց նաև բաց երկխոսություն սկսել այն անձանց միջև, որոնք ուղղակիորեն ներքաշված են եղել շրջանային հակամարտությունների մեջ՝ ուսումնասիրելու հարցի լուծման մեթոդաբանությունները և Եկեղեցիների հնարավոր մասնակցությունն ու առաջնորդությունը: Մասնակիցներ պետք է հրավիրվեն նաև Հյուսիսային Իռլանդիայից և Բալկաններից:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ